

Ա. ՍԱԿԵՎԻՉ

# ՃՈՒՏԻ ԿՆԵՐԸ



891.715  
Ս-14

Հ Ա Յ Պ Ե Տ Ղ Ր Ա Տ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1940



**ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՎԸ ՃՈՒՏԻԿՆԵՐ ՀԱՆԵՑ**

Մի անգամ յերեխաները գնացին հավանոց:

— Այս ինչ է պատահել Սևուկին, — զարմացավ Յուրան: Ամբողջ որերով նստած է բնի մեջ և զբոսնելու յել չի դուրս գալիս: Գուցե հիվանդ է:

Յերեխաները վազեցին Յելենա Պետրովնայի մոտ:

— Վհչ, — ասաց Յելենա Պետրովնան: — Սևուկը չի հիվանդացել: Գարունը յեկել է, Սևուկի համար ճուտիկներ հանելու ժամանակն է: Առանձին բուն կշիներ և ձվերը կգնենք այնտեղ: Մանկապարտեզում ճուտիկներ կունենանք:

Յերեխաները վազեցին, վորը ծղոտ, վորը կողով բերելու բուն շինեցին, մեջն ընտրովի ձվեր դրեցին և տեղավորեցին առանձին սրահում:



1694

891.715 աճ.

U - 14

Այժմ Սևուկին վոչ վոք չի խանգարի: Ձվերը տեսնելով, Սևուկն իսկույն կողովի մեջ մտավ ու նստեց:

Նստած եր Սևուկը հանգիստ հանգիստ, և ցերեկը և գիշերը: Մի րոպեով միայն վեր եր կենում կուտ ուտելու, կամ ջուր խմելու և շուտով գալիս եր նստում ձվերի վրա, վոր չսառչեն:



Ամեն որ յերեխաներն այցելում էին Սևուկին: Բարորն ել զարմանում էին, թե ինչպես է, վոր Սևուկը բնում նստելուց չի ձանձրանում:



Յուրիկը բնում գտնվող ձվերին ձեռք տվեց: Չվերը տանք, տանք էլին: Սևուկը բարձրացավ, սկսեց կացահարել, չեր թողնում, վոր ձվերին ձեռք տան:

Յելենա Պետրովնան ասաց, վոր Սևուկը 21 որ պետք է ձվերի վրա նստի: Յուրիկն որացույց պատրաստեց և կախեց պատին: Որացույցում 21 վանդակ կար և յերեխաներն ամեն որ մի-մի վանդակ ջնջում էլին: Շուտով շատ քիչ վանդակ մնաց, յերեք, յերկու, մեկ:

Ահա և վրա հասավ 21-րդ որը:

Բոլորը միասին գնացին Սևուկի մոտ:

Յելենա Պետրովնան Սևուկին ձվերի վրայից վերցրեց: Սևուկի տակ, ձվերի միջև, թրպրտում էլին յերկու դեղին ճուտիկ: Ուրեմն,

ձվի կեղեվը կտարել էլին ու դուրս յեկել: Կողքերին ընկած էլին կեղևները: Մյուս ձվերից դեռ ճուտիկներ չէլին դուրս յեկել: Յելենա Պետրովնան բնից մի ձու վերցրեց և մոտեցրեց Յուրիկի ականջին: Յուրիկը լսեց, թե ինչպես ձվի մեջ ինչ վոր մի բան կամաց-կամաց թխթխկացնում է. թը՛խկ, թը՛խկ, թը՛խկ: ճուտիկներ կտցով խփում:

Հանկարծ ձուռն ճաքեց և նրա միջից ճուտիկը կտուցը դուրս ցցեց: Չվի կեղևը ճոճուաց, յերկու կես յեղավ և ճուտիկը միջից ցած գլորվեց: ճուտիկը դեռ վոտի վրա կանգնել չեր կարողանում, թաց եր, տգեղ, խղճալի:



Բոլոր ճուտիկներն ել այդպես էլին: Յերը վոր չորանան, փափրիկ ու սիրուն կզառնան:

Արդեն բոլոր ճուտիկները  
դուրս ելին յեկել:  
Սևուկը բնից իջավ և ճու-  
տիկներին կանչեց: Ճուտիկ-  
ները նրա յետևից վազեցին:  
Բնում միայն ձվերի կեղև-  
ները մնացին:



Այգոււմ, ճուտիկների հա-  
մար, յերկաթալարի պատերով  
մի տնակ շինեցին: Պատերը  
յերկաթալարից շինեցին, վոր  
տնակը լույս լինի և շունը,  
կամ կատուն ներս մտնել չը-  
կարողանան:

Տնակը շատ լավ եր և  
ճուտիկների համար հարմար:



Ճուտիկներին առաջին անգամ վոր կեր տվին, կտցել չկարողացան: Նայում էին, նայում, բայց չէին ուտում: Սևուկն սկսեց նրանց ուտել սովորեցնել: Կտցով խփում եր տախտակին, վերցնում պինդ խաշած ձվի մի կտոր, դեն եր գցում և նորից վերցնում: Ճուտիկները նայեցին, նայեցին, իրենք ել սկսեցին կտցել: Այդպես ել սովորեցին:



Անցավ մի հնգօրյակ:  
Ճուտիկներին բաց թողեցին այգին:  
Նրանք ցրվեցին այգում և սկսեցին վորդեր ու մժղուկներ վորոնել: Ճուտիկները դեռ այնքան փոքր էին, վոր բարձր խոտերի մեջ բոլորովին չէին յերևում:

Հենց վոր Սևուկը վորդ, կամ մժղուկ եր գտնում, իսկույն ճուտիկներին իր մոտ եր կանչում: Սևուկն ամբողջժամանակ հսկում եր ճուտիկներին: Վոչ վոքի չեր թողնում, վոր նրանց ձեռք տան:



Յերբ ճուտիկները մրսում, կամ քնել էին ուզում, մտնում էին Սևուկի թևերի տակ: Այնտեղ նրանց համար տաք եր: Տաքանալուց հետո, ճուտիկները բարձրանում էին Սևուկի մեջքի վրա: Բարձրանում էին մեջքի վրա, դես ու դեն նայում, և, կարծես, ասում էին. «Այ թե, ի՞նչ քաջն եմ յես»:



Ճուտիկները շատ արագ մեծացան: Բմբուլի փոխարեն, նրանց վրա գույնզգույն փետրիկներ դուրս յեկան, իսկ գլխներին՝ կատարիկներ: Նրանք արդեն սկսեցին մենակ, առանց Սևուկի, վազվզել այգում:



Յերեխաները հինգ ուրը մեկ անգամ նայում էին ճուտիկներին, վոր հետո չմոռանան, թե նրանք առաջ ինչպես էին: Ճուտիկները բոլորովին ընտելացան և վոչ վոքից չէին վախենում, վորովհետև յերեխաները նրանց յերբեք չէին վախեցնում ու նեղացնում:



Ամռան վերջին ճուտիկներն այնքան մեծացան, վոր անձանաչելի դարձան: Այնքան մեծացել ու ծանրացել էին, վոր ձեռքերով պահելը դժվար էր:

Տեսեք, թե ինչ խոշոր են:

Բայց չե՞ վոր առաջ պստիկ, պստիկ էին:




5029

ԳԻՆԸ 1 Ռ. 20 Կ.

Թարգմանիչ՝ Հ. Հայրապետյան  
Նկարները՝ Ո. Գ. Բոնչ-Ոսմոնովսկայի  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Լիտոգրաֆ նկարիչ՝ Ս. Գասպարյան  
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

Գլավիտի լրագրը՝ Բ—1099 Հրատ. 5159  
Պատկեր 128. Տիրաժ 4000.

Հայկեստանի տպարան,  
Յերևան, Լենինի № 65



А. САКЕВИЧ  
ЦЫПЛЯТА

Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.